Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 18th September 2022 Bulletin 40/2022

Second Sunday of the Exaltation (Eve of the Fast of the Holy Cross of Varak)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 10:18-11:10

որովհետեւ գնահատելի է ո՛չ թէ ա՛ն՝ որ ինքզինք կը յանձնարարէ, հապա ա՛ն՝ որ Տէ՛րը կը յանձնարարէ:

Երանի՛ թէ կարենայիք քիչ մը հանդուրժել իմ անմտութեանս. եւ իսկապէս՝ հանդուրժեցէ՛ք ինծի: Որովհետեւ նախանձախնդիր եմ ձեզի հանդէպ՝ Աստուծոյ նախանձախնդրութեամբ. քանի որ մէ՛կ ամուսինի նշանեցի ձեզ, որպէսզի Քրիստոսի՛ ներկայացնեմ ձեզ՝ մաքրակենցաղ կոյսի մը պէս: Բայց կը վախնամ որ, ինչպէս օձը խաբեց Եւան իր խորամանկութեամբ, նոյնպէս ձեր միտքերը ապականին Քրիստոսի հանդէպ եղած պարզամտութենէն: Որովհետեւ եթէ մէկը գար եւ քարոզէր ուրի՛շ Յիսուս մը՝ որ մենք չենք քարոզած, կամ ստանայիք ուրիշ հոգի մը՝ որ չէք ստացած, կամ ուրիշ աւետարան՝ որ չէք ընդունած, լաւ կը հանդուրժէիք այդպիսիին: Քանի որ ես կը սեպեմ թէ ոչինչո՛վ ետ մնացած եմ գերագոյն առաքեալներէն. ու թէպէտ անվարժ եմ խօսքի մէջ, բայց ո՛չ՝ գիտութեամբ. սակայն ամէն բանի մէջ մենք մեզ ամբողջովին բացայայտեցինք ձեզի:

Միթէ սխա՞լ գործած եղայ ես զիս խոնարհեցնելով՝ որպէսզի դո՛ւք բարձրանաք, քանի որ ձրի քարոզեցի ձեզի Աստուծոյ աւետարանը. կողոպտեցի ուրիշ եկեղեցիներ՝ թոշակ առնելով անոնցմէ, որպէսզի սպասարկեմ ձեզի: Ձեր մէջ ներկայ եղած ատենս՝ երբ կարօտութեան մէջ էի, ձեզմէ ո՛չ մէկուն բեռ եղայ. որովհետեւ Մակեդոնիայէն եկող եղբայրնե՛րը լրացուցին ինչ որ կը պակսէր ինծի. եւ ամէն կերպով զգուշացայ ձեզի ծանրութիւն ըլլալէ, ու դարձեալ պիտի զգուշանամ: Քանի որ Քրիստոսի ճշմարտութիւնը իմ մէջս է, ո՛չ մէկը պիտի արգիլէ զիս այս պարծանքէն՝ Աքայիայի շրջանները:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 10:18-11:10;

For it is not the one who commends himself who is approved, but the one whom the Lord commends.

Paul and the False Apostles

I hope you will put up with me in a little foolishness. Yes, please put up with me! I am jealous for you with a godly jealousy. I promised you to one husband, to Christ, so that I might present you as a pure virgin to him. But I am afraid that just as Eve was deceived by the serpent's cunning, your minds may somehow be led astray from your sincere and pure devotion to Christ. For if someone comes to you and preaches a Jesus other than the Jesus we preached, or if you receive a different spirit from the Spirit you received, or a different gospel from the one you accepted, you put up with it easily enough.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

I do not think I am in the least inferior to those "super-apostles." [a] I may indeed be untrained as a speaker, but I do have knowledge. We have made this perfectly clear to you in every way. Was it a sin for me to lower myself in order to elevate you by preaching the gospel of God to you free of charge? I robbed other churches by receiving support from them so as to serve you. And when I was with you and needed something, I was not a burden to anyone, for the brothers who came from Macedonia supplied what I needed. I have kept myself from being a burden to you in any way, and will continue to do so. As surely as the truth of Christ is in me, nobody in the regions of Achaia will stop this boasting of mine.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10:1-12

Կանգնելով՝ անկէ գնաց Հրէաստանի հողամասը, Յորդանանի միւս եզերքէն: Դարձեալ բազմութիւնները անոր շուրջ կը համախմբուէին, եւ ինչպէս սովորութիւն ունէր՝ դարձեալ կը սորվեցնէր անոնց:

Փարիսեցիները եկան անոր քով ու հարցուցին՝ փորձելու համար զայն. «Արտօնուա՞ծ է մարդու մը՝ որ արձակէ իր կինը»: Ան ալ պատասխանեց անոնց. «Մովսէս ի՞նչ պատուիրեց ձեզի»: Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց ամուսնալուծումի վկայագիր մը գրել եւ արձակել»: Յիսուս պատասխանեց անոնց. «Ձեր սիրտին կարծրութեա՛ն համար գրեց ձեզի այդ պատուէրը. բայց արարչութեան սկիզբէն՝ Աստուած զանոնք արու եւ էգ ստեղծեց: "Այս պատճառով մարդը պիտի թողու հայրն ու մայրը, եւ պիտի յարի իր կնոջ, ու երկուքը պիտի ըլլան մէ՛կ մարմին": Ուստի ա՛լ երկու չեն, հապա՝ մէկ մարմին. ուրեմն մարդը թող չզատէ ինչ որ Աստուած իրարու միացուցած է»:

Տունը՝ իր աշակերտները դարձեալ նոյն բանը հարցուցին իրեն: Ըսաւ անոնց. «Ո՛վ որ արձակէ իր կինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ անոր դէմ: Ու եթէ կին մը արձակէ իր ամուսինը եւ ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ»:

The Holy Gospel of Jesus Christ according to Mark 10:1-12

Divorce

Jesus then left that place and went into the region of Judea and across the Jordan. Again crowds of people came to him, and as was his custom, he taught them.

Some Pharisees came and tested him by asking, "Is it lawful for a man to divorce his wife?"

"What did Moses command you?" he replied.

They said, "Moses permitted a man to write a certificate of divorce and send her away."

"It was because your hearts were hard that Moses wrote you this law," Jesus replied. "But at the beginning of creation God 'made them male and female.' [a] 'For this reason a man will leave his father and mother and be united to his wife, [b] and the two will become one flesh.' [c] So they are no longer two, but one flesh. Therefore what God has joined together, let no one separate."

When they were in the house again, the disciples asked Jesus about this. He answered, "Anyone who divorces his wife and marries another woman commits adultery against her. And if she divorces her husband and marries another man, she commits adultery."

Բարեկենդան Վարագա Սուրբ Խաչին

Այս կիրակին նախորդում է պահքին, որը նվիրված է Վարագա լեռան վրա Սուրբ խաչափայտի մասունքը գտնելուն: Ավանդույթի համաձայն՝ տեսիլքով նրանց երևում է Սբ. Աստվածածինը և պատվիրում մեկնել Արարատյան երկիր՝ Հայաստան: Կույսերը գալիս են Վաղարշապատ: Ճանապարհին, Վարագա լեռան մոտով անցնելիս, Հռիփսիմեն Սբ. խաչափայտից մի մասունք, որը ժառանգաբար էր ստացել եւ միշտ կրում էր իր պարանոցին, ամփոփում է հայոց հողում: Այդ մասունքը հրաշքով գտնվում է 7-րդ դարում, որից հետո Հայ Առաքելական Եկեղեցին խաչի տոների շարքում սկսում է տոնել նաև Վարագա խաչի տոնը:

Eve of the Fast of the Holy Cross of Varague

This is the Sunday preceding the week prior to the feast of the Appearance of the Holy Cross on the Mount Varague, lasting from Monday to Friday. Being hidden by St. Hripisime on the Mount Varague, the relic of the Lord's Wooden Cross was found by a miracle in the 7th century and the Armenian Apostolic Church established another purely national feast dedicated to the Holy Cross, which is famous as the Holy Cross of Varague.

Her Majesty Queen Elizabeth II
1926—2022
May the Lord receive her faithful soul in
His Heavenly Kingdom and rest her in peace.

There is a book of condolences at the church entrance. Please add your heartfelt comments.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Եթէ մի մարդ արձակի իր կնոջը եւ ուրիշին առնի, շնութիւն արած կլինի: Եւ մի կին եթէ թող նի իր ամուսնուն եւ ուրիշ մարդու կին լինի, շնութիւն արած կլինի» (Մարկ. 10:11-12)

Քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր,

Մեր ամենօրեայ կեանքի զանազան դրուագներ մենք յաճախ ենք համեմատում Սուրբ Գրքի ա յս կամ այն խօսքի հետ՝ քաջալերուելով ճիշտ ընթացքի մէջ եւ ուղղելով սխալ ընթացքը: Ամենօրեայ մեր հոգեւոր ընթերցումների մէջ շատ ծանօթ մտքեր ու խօսքեր անգամ նորովի են մեր աչքին եւ մտ քին երեւում՝ նոր խոկումներ եւ նոր պատասխաններ բերելով: Ամուսնական պսակի խորհուրդն այն քան հին եւ այքան ծանօթ է թւում, որ կարծես ամէն ինչ ասուած է այս մասին: Բայց կեանքը, լինելո վ մշտապէս փոփոխուող, նոր հարցեր է ծնում, որոնց պատասխանները կրկին Աւետարանն է մատո ւցում:

Ի տարբերութիւն արեւմտեան եկեղեցական աւանդութեան՝ Ս.Պսակի ժամանակ մեր եկեղեց ում առաքելական նամակներից ընթերցւում է ոչ թէ սիրոյ քարոզը (Ա.Կորնթ. 13: 1-8), որ խօսում է ընդհանրապէս աստուածային սիրոյ մասին, այլ Քրիստոսով նորոգուած ամուսնակ ան սիրոյ եւ պարտականութիւնների մասին հատուածը (Եփես. 5:21-33):

Այստեղ երկու տարբեր սեռի մարդկանց իրար կապողը ոչ միայն մարդկային համակրանքն է, այլ աստուածային սէրն է, որ արտայայտւում է միմեանց նկատմամբ, խնամքով, հոգատարութեամբ , զոհողութեամբ: Պօղոս առաքեալն այս զոհողական սէրը եւ միութիւնը համեմատում է Քրիստոս Փեսայի եւ Եկեղեցի Հարսի յարաբերութեան հետ՝ ասելով. «**Այս խորհուրդը մեծ է. բայց ես ասում եմ Քրիստոսի եւ ե կեղեցու վերաբերեալ**» (Եփես.5:32): Գրեթէ ամբողջ այս հատուածը ամուսինների սիրոյ եւ Քրիս տոսի աստուածային սիրոյ շարունակական համեմատութիւնն է: Ինչպէս որ Քրիստոս եկեղեցու գլո ւխն է եւ ամբողջ մարմնի փրկիչը, նոյն մտածումով ամուսինն է կնոջ գլուխը եւ նրան անգամ զոհաբ երության գնով փրկողը: Ոչ թէ ատել, այլ սնել եւ խնամել է պարտաւոր ամուսինը կնոջ համար, ինչպ էս Քրիստոս է սնում եւ խնամում եկեղեցին՝ Իր մարմինը: Կնոջ միակ պատասխանը սրան սիրոյ հն ազանդութիւնն է, ինչպէս եկեղեցին հնազանդ է իր գլխին՝ Քրիստոսին: Եւ ինչպէս Ադամը Եւային ա սաց «**Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից եւ մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչուի կին, որովհետ եւ իր ամուսնուց ստեղծուեց**» (Ծնն.2:23), նոյն կերպ Պօղոս առաքեալը խոսում է Քրիստոսի մար մին եկեղեցու մասին՝ ասելով.

«**քանզի անդամներն ենք նրա մարմնի՝ նրա մարմնից եւ նրա ոսկորներից**» (Եփես. 5:30): Չէ՞ որ քրիստոնէական եկեղեցին ծնուեց Քրիստոսի խոցուած կողից, որտեղից արիւն եւ ջուր բխեց՝ իբրեւ Ս. Մկրտութեամբ եւ Ս. Հաղորդութեամբ ծնուելու եւ սնուելու խորհուրդ: Եկեղեցում շ արունակաբար ներկա է Մկրտութեան սուրբ Աւազանից վերստին ծննդեան եւ Պատարագի զոհաբ երության խորհուրդի միջից Քրիստոսով սնուելու, խնամք ունենալով հոգեւոր փորձառութիւնը:

Յաճախ Աստծոյ սիրոյ մասին պատկերացում տալու համար մէջբերում ենք Յովհաննու Աւետ արանից հատուած, ուր Միածին Որդուն զոհաբերմամբ մատուցւում է սիրոյ գերագոյն չափանիշը. «**Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդուն տուեց, որպէսզի, ով ն ման հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը**» (Յովհ.3.16): Այս սիրոյ արդիւնք է ամբողջ արարչութիւնը, մարդկութեան նկատմամբ չընդհատուող խնամքն ու գուրգուրանքը:

Այս սէրն է միակ կապող կամուրջը մեր բոլոր յարաբերութիւնների մէջ՝ Աստծոյ հետ եւ մարդկանց միջեւ: Մեր մարդկային սէրերը մշտապէս նորոգւում են Աստծոյ սիրով: Դրա համար է պսակուող զոյգը եկեղեցի գալիս, եկեղեցում քահանայի եւ սուրբ խորանի առաջ խոս տումն Աստծոյ օգնութեամբ կատարելու խնդրանքն ունենանում եւ պարտք համարում մշտապէս եկեղեցու համայնքի մէջ մնալ ու սնուել այդ սիրուց: Մարդկային, ընտանեկան եւ հասարակական բոլոր ճգնաժամներն աստուածային այս սէրը կորցնելու կամ այդ սիրով չառաջնորդուելու հետեւանք են:

Մեր օրերի ամենից լուրջ եւ անհանգստացնող երեւոյթներից է ամուսնական զոյգերի բաժանումը, մանաւանդ իրենց քրիստոնեայ եւ եկեղեցու զաւակ յայտարարող ամուսինների: Իրենց քրիստոնեայ կոչող որոշ մարդիկ աւելորդ են համարում Աստծոյ եկեղեցու կարգով պսակուելը, որոնք իրար հետ ուղղակի ապրելով եւ ցանկացած պահի իրարից բաժանուելու հեռանկարով այդպէս էլ Աստծոյ օրհնութիւնից զուրկ են մնում՝ յաճախ այդ վիճակով զաւակներ ունենալով:

Երբ փարիսեցիները Քրիստոսին փորձելու համար մօտենում են ամուսնական բաժանումի մասին հարցումով, Յիսուս նրանց ամուսնական նախնական վիճակն է ցոյց տալիս, որ սկզբից ապահարզանի հարց չի եղել, մարդկանց խիստ ու դաժան սիրտ ունենալու պատճառով է Մովսէսի միջոցով դա ներմուծուել: Քրիստոս սրանով կարծես յիշեցնում է անում, որ Աստուած անփոփոխելի եւ բաժանման չենթարկուող սիրով է սիրում եւ խնամում մեզ, ինչի մաս ին ասում է Երեմիա մարգարէն «Յաւիտենական սիրով սիրեցի քեզ, դրա համար էլ քեզ գթութեան արժանացրի» (Եր. 32.3):

Քրիստոս երբեք չի բաժանուել եւ հեռացել եկեղեցուց՝ Իր Հարսից: Այս սէրը յաւիտենական եւ բաժանում չենթադրող սէր է: Այս սէրը մահուան պէս հզօր եւ մահուանն անգամ յաղթող սէր է: Աստուած այսպիսի սիրով սիրեց մեզ՝ սիրելու օրինակ տալով մեզ: Աստծոյ նկատմամբ սէրն արտայայտւում է միմեանց նկատմամբ սիրոյ եւ մանաւանդ՝ ընտանիքում ամէնօրեայ յարաբերութեան մէջ խնամք, հոգատարութիւն եւ զոհողութիւն ունենալու մէջ:

Ուստի, եկեղեցու փոքր օրինակ եղող ընտանիքում ներկայ է Աստուած, երբ մենք Աստծոյ խօսքով ենք ապրում, աղօթքով ենք զօրանում եւ նորոգում ենք մեր սէրը միմեանց նկատմամբ Աստծոյ սիրով: Այդ ժամանակ դաւաճանութեան կամ շնութեան մղող օձային ցանկացած միտք պիտի հալի Աստծոյ սիրոյ հրի առջեւ:

Խաղաղութիւն, ներդաշնակութիւն եւ աստուածային օրհնաբեր սէր ձեր ընտանիքներին մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Ում Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2022 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

19 September Sts. Mamas, Philomenos, and Simeon the Stylite
Proverbs 8:9-11; Isaiah 55:10-13; 2 Corinthians 5:1-5; Luke 21:12-19

20 September The Holy Virgins Febronia, Marina, and St. Shooshan, the daughter of Vartan the Great
Proverbs 23:15-25; Hosea 14:6-8; 2 Corinthians 6:16-7:1; Luke 6:20-23

21 September 2 Corinthians 11:10-23; Mark 10:17-23

22 September The Holy Fathers Barlaam, Anthimus, and Irenaeus
Wisdom 10:9-12; Malachi 2:5-7; 1 Peter 5:1-7; John 10:11-16

23 September 2 Corinthians 11:30-12:9; Mark 10:28-34

24 September St. George (Kevork) the Warrior and St. Romanos the Melodist
Wisdom 8:19-9:5; Isaiah 42:1-8; 2 Corinthians 1:3-7; Luke 12:2-9



food■give

A Barnabas Fund project

The International Christian Food Bank

food■gives, is your opportunity to share your food with hungry believers around the world.

We live in a world of terrible hunger■

But some of us have food to spare■

"You can make a difference by donating dry food to Christians in need"

The Armenian Church Diocese in U.K. is joining the Barnabas Fund Project, in the food■gives initiative to help Christians in need by donating six types of dry food:

Wheat flour (wholemeal, not self-rising flour)
Rice,
Lentils, (dried)
Chick-peas, (dried)
Soap Bar,
Salt, (preferably bags, not tubs).

Please Join **St Yeghiche Armenian Church** in this drive by donating dried food (not tins) and ensure the items do not contain liquid, oil, or animal products.
We can receive bag sizes up to 3kg. alternatively you can make a financial contribution which will be used to buy the said items and donated to the cause.

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd
Account at: HSBC, Acc.no:42674432, Sortcode:40-02-26,
IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F ref: "food■gives"

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic contributions.

Thank you. Your Christian generosity is appreciated to all those in need.
St Yeghiche Armenian Church Parish Council

Thanksgiving prayers for The 31st anniversary of the Independence of the Republic of Armenia

@

St Yeghiche Armenian Church

13b Cranley Gardens, South Kensington, London SW7 3BB

The 31st anniversary of the Independence of the Republic of Armenia will be celebrated with a special thanksgiving prayer service at St. Yeghiche Armenian Church in London on the feast of the Holy Cross of Varag on Sunday, September 25th, 2022.

The liturgy will commence at 11:00 am. Special thanksgiving prayer service will follow at the end of Divine Liturgy service.

O Lord our God, listen to the voice of supplications of your servants and, keep unshaken the Republic of Armenia, which you restored through the grace of your mercy

Please join us for prayers and reflection.

<u>Ինչքան սքանչելի է բարությունը և որքան անսպասելի դրանից քաղած պտուղները (առակ)</u>

Մի չքավոր տղա, ով դռնեդուռ էր ընկնում ապրանքներ վաճառելու համար, որպեսզի վճարի ուսման վարձը, նկատում է, որ իր մոտ եղած գումարը պակասում է, որոշում է ուտելու բան խնդրել որևէ մեկից: Թակում է մեկի տան դուռը և այն բացում է մի կին, ով մի մեծ բաժակ կաթ է հյուրասիրում: Խմելով այն՝տղան հարցնում է, թե որքա՞ն է պարտք սրա համար: Կինը պատասխանում է, որ իր մայրը սովորեցրել է բարության դիմաց ոչինչ չընդունել: Տղան պատասխանում է. “Այդ դեպքում շնորհակալություն իմ սրտի խորքից”:

Տարիներ անց կինը հիվանդանում է հազվադեպ պատահող ծանր հիվանդությամբ, ում ուղեկցում են լավագույն բժշկի մոտ, որին հաջողվում է փրկել կնոջ կյանքը: Եվ երբ գալիս է վիրահատության ծախսերը վճարելու պահը, քանի որ կինն էլ սպառել էր իր բոլոր ունեցածը և մտածում էր ինչպես պետք է վարձահատույց լինի, բժիշկը վճարման թերթիկի վրա գրում է հետևյալ տողերը. “Փակված է ամբողջությամբ՝ մեկ բաժակ կաթով”…

Ինչքան սքանչելի է բարությունը և որքան անսպասելի դրանից քաղած պտուղները:

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Armenian Community of Great Britain and Northern Ireland for the soul of their Queen who was also a loving Mother, Grandmother and Great grandmother the late **HER MAJESTY QUEEN ELIZABETH II** on the 7th day memorial of her passing.
May the Lord receive her faithful soul in His Heavenly Kingdom and rest her in peace.

By the Armenian Community in United Kingdom for the souls of all the fallen **Armenian martyrs of the 13th September 2022 attack by Azeri forces,** who sacrificed their lives for our homeland, also for all the innocent civilians who were killed by the enemy's indiscriminate bombing.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.